ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
Ո՞ր կայքից կարող ենք օգտվել պետական գրանցման հետ կապված հարցեր ունենալու դեպքում:	Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական՝ e-register.am ինտերնետային կայքից:
Լինելով մարզի բնակիչ՝ կարո՞ղ եմ արդյոք որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվել Սպասարկման բաժնի Երևանի գրասենյակում:	Այո, ներկայումս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գործում է <<մեկ պատուհանի>> սկզբունքը և քաղաքացին կարող է մոտենալ Սպասարկման բաժնի ցանկացած սպասարկման գրասենյակ՝ անկախ նրանից, թե հանրապետության որ մարզի բնակիչ է:
Անհատ ձեռնարկատերը մահացել է: Ի՞նչպես կարելի է նրան հանել հաշվառումից:	Մահացած անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելն իրականացվում է շահագրգիռ անձի դիմումի համաձայն, որի համար ներկայացվում են որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի նույնականացման համար բավարար ցանկացած տեղեկատվություն, մահվան փաստը հավաստող փաստաթուղթ և դրա պատճենը: Մահվան փաստը հավաստող փաստաթուղթը պատճենի հետ համադրվելուց հետո վերադարձվում է այն ներկայացնողին:
Բաժնեմասի օտարման պայմանագրի համար նոտարական վավերացումը պարտադի՞ր է:	Ոչ, բաժնեմասի օտարման պայմանագիրը կարող է կնքվել նաև հասարակ ձևով կազմված, գրավոր պայմանագիր կնքելու միջոցով:
Կարող է արդյո՞ք օտարերկրյա ֆիզիկական անձը հիմնադրել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:	Այո, անհրաժեշտ է ներկայացնել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հիմնադրելու համար օրենքով նախատեսված բոլոր փաստաթղթերը և օտարերկրյա ֆիզիկական անձի անձնագրի պատճենը՝ թարգմանված և պատշաճ վավերացմամբ:
Որքա՞ն տուրք է անհրաժեշտ վճարել միասնական տեղեկանք ստանալու համար:	Միասնական տեղեկանք ստանալու համար անհրաժեշտ է վճարել 3000 ՀՀ դրամ պետական տուրք՝ 900005016499 հաշվեհամարին:
Ի՞նչ է անհրաժեշտ ընկերության կանոնադրության պատճենը ստանալու համար:	Ընկերության կանոնադրությունը ստանալու համար անհրաժեշտ է վճարել 3000 ՀՀ դրամ պետական տուրք՝ 900005016499 հաշվեհամարին:
Կարո՞ղ է արդյոք մեկ անձը հիմնադրամ հիմնադրել:	Այո, կարող է: «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը հիմնադրամի հիմնադիրների քանակի հետ կապված որևէ սահմանափակում չի նախատեսում:
Ի՞նչ պարտադիր պահանջներ պետք է բովանդակի պետական գրանցման կամ պետական հաշվառման համար գործակալություն ներկայացվող դիմումը:	Պետական գրանցման կամ պետական հաշվառման համար գործակալություն ներկայացվող դիմումը պետք է բովանդակի՝ 1) դիմողի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը). 2) դիմող ֆիզիկական անձի անձնագրի կամ նույնականացման քարտի (այսուհետ՝ անձնագիր) տվյալները, բնակության կամ հաշվառման հասցեն, իրավաբանական անձի գրանցման համարը և գտնվելու վայրը. 3) նշում, որ դիմումը ներկայացվում է գործակալություն. 4) ներկայացվող պահանջը. 5)

	դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը. 6) դիմումը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը. 7) դիմող ֆիզիկական անձի ստորագրությունը կամ դիմող իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ լիազորված անձի ստորագրությունը:
Ովքե՞ր կարող են լինել լսումների մասնակիցներ:	Լսումների մասնակիցներն են՝ 1) պետական հաշվառման կամ պետական գրանցման համար դիմած անձը, օրենքով նախատեսված դիմում բերող անձը. 2) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել լսումների արդյունքում. 3) այլ անձինք՝ վկաներ, փորձագետներ, թարգմանիչներ:
Ի՞նչ հիմքով (հիմքերով) կարող է մերժվել ֆիրմային անվանման պետական գրանցումը:	Ֆիրմային անվանման գրանցումը մերժվում է, եթե որպես ֆիրմային անվանում ներկայացված անվանման տարբերակող նշանակություն ունեցող անունը՝ 1) նույնական է Հայաստանի Հանրապետությունում պահպանվող այլ իրավաբանական անձի ֆիրմային անվանմանը. 2) նույնական է կամ ամբողջությամբ ներառում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների անվանումները. 3) վերարտադրում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան պահպանվող միջազգային կազմակերպությունների լրիվ կամ կրճատ անվանումը. 4) պարունակում է հայհոյանքներ, վիրավորական անվանումներ, անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին, հակասում է մարդասիրության և բարոյականության սկզբունքներին:
Ո՞վ իրավունք ունի դիմելու իրավաբանական անձի պետական գրանցման համար:	Իրավաբանական անձի պետական գրանցման համար դիմելու իրավունք ունեն՝ 1) իրավաբանական անձի հիմնադիր(ներ)ը. 2) իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը. 3) օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված այլ անձ. 4) նախորդ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված անձանց կողմից լիազորված ցանկացած գործունակ անձ:
Հիմնադրամի հիմնադիրը կարո՞ղ է փոխվել:	Ոչ, հիմնադրի փոփոխություն օրենքը թույլ չի տալիս: Հիմնադիր է համարվում մինչև իրավաբանական անձի պետական գրանցման պահը իրավաբանական անձ հիմնադրելու մասին որոշում ընդունած ֆիզիկական կամ իրավաբանական անձ:
Ի՞նչ կարգով են փոխվում հիմնադրամի նպատակները և շահառուների խմբերը:	Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին վերաբերող փոփոխություններ կատարելու իրավունքն իրականացնում է դատարանը՝ հիմնադրամի մարմինների կամ հիմնադիրներից մեկի կամ օրենքի համաձայն ստեղծված հոգաբարձուների ժամանակավոր խորհրդի դիմումի հիման վրա:
Ինչպե՞ս է ձևավորվում հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը:	Օրենքը հոգաբարձուների խորհրդի կազմավորման կարգ չի սահմանում: Հոգաբարձուների խորհրդը կազմավորվում է կանոնադրությամբ սահմանված կարգով:
Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը կարո՞ղ է լինել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ:	Ոչ, չի կարող: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ:

Հասարակական կազմակերպության պետական գրանցման մերժման դեպքում քանի՞ օր հետո կազմակերպությունը կարող է կրկին դիմել գործակալություն՝ պետական գրանցման խնդրանքով և արդյոք պետք է կրկին վճարվի պետական տուրքը:	Մերժման մասին որոշումը ստանալուց հետո դիմողը կարող է երկու աշխատանքային օրվա ընթացքում շտկել սխալները և փաստաթղթերը կրկին ներկայացնել գործակալություն՝ պետական գրանցում կամ պետական հաշվառում կատարելու համար: Եթե նախկինում վճարվել էր պետական տուրք, ապա պետական տուրք կրկին չի վճարվում, և պետական գրանցման կամ պետական հաշվառման դիմումում նշվում են նախկինում ներկայացված պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթի տվյալները: Եթե անձը նշված ժամկետում (երկու աշխատանքային օրվա ընթացքում) շտկված կամ լրացված փաստաթղթերը չի ներկայացնում պետական գրանցման կամ պետական հաշվառման կամ կրկին ներկայացված փաստաթղթերում նույնպես առկա են մերժման հիմքեր (բացառությամբ այն դեպքի, երբ կրկին ներկայացված փաստաթղթերում առկա են պետական գրանցումը կամ պետական հաշվառումը մերժելու այնպիսի հիմքեր, որոնք առկա էին փաստաթղթերի առաջին ներկայացման ժամանակ, սակայն դրանց մասին մատնանշված չէր մերժման որոշման մեջ, ապա անձը կարող է կրկին դիմել գործակալություն վերը նշված կարգով) ապա մերժումը համարվում է վերջնական, և պետական տուրքը չի վերադարձվում:
Ովքե՞ր կարող են հիմնադրել հասարակական կազմակերպություն:	Հասարակական կազմակերպություն կարող են հիմնադրել առնվազն երկու ֆիզիկական անձ:
Ովքե՞ր չեն կարող հանդիսանալ կուսակցության անդամ:	Կուսակցության անդամ չեն կարող լինել դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողները, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, ոստիկանության և այլ իրավապահ մարմինների աշխատակիցները. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի ծառայողները:
Կարո՞ղ է արդյոք անձը հանդիսանալ մի քանի կուսակցության անդամ:	Յուրաքանչյուր անձ կարող է միաժամանակ լինել միայն մեկ կուսակցության անդամ:
Ի՞նչ է անհրաժեշտ լրատվության միջոցների հաշվառման համար:	Լրատվության միջոցները թողարկվում և տարածվում են առանց նախնական կամ ընթացիկ պետական գրանցման, լիցենզավորման, պետական կամ որևէ այլ մարմնում հայտարարագրման կամ որևէ մարմնի ծանուցման: Հայաստանի Հանրապետությունում նյութական կրիչի վրա թողարկված և Հայաստանի Հանրապետությունում տարածվող լրատվության միջոցի յուրաքանչյուր թողարկման երկուական օրինակ անվճար ուղարկվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի ազգային գրադարան և Հայաստանի ազգային գրապալատ:
Ի՞նչ պարտադիր տեղեկություններ պետք է ներառի լրատվության միջոցը:	Նյութական կրիչի վրա թողարկված լրատվության միջոցի յուրաքանչյուր թողարկում պետք է ներառի՝ լրատվության միջոցի անվանումը, լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը, իրավաբանական անձի պետական գրանցման (կամ

	իրավաբանական անձի անունից գործող նրա առանձնացված ստորաբաժանման հաշվառման) վկայականի համարը, տրման օրը, իսկ եթե լրատվական գործունեություն իրականացնողը ֆիզիկական անձ է, ապա նրա անունը, ազգանունը, հասցեն, եթե նա անհատ ձեռնարկատեր է, ապա նաև պետական գրանցման վկայականի համարը և տրման օրը, լրատվության միջոցի տվյալ թողարկման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը (ըստ անձնագրի), տվյալ թողարկման տարին, ամիսը և ամսաթիվը, տվյալ թողարկման հերթական համարը, տվյալ թողարկման օրինակների ընդհանուր քանակը: Թողարկման տվյալների մեջ կարող են ներառվել սույն հոդվածում չնշված այլ տեղեկություններ:
Կարո՞ղ է արդյոք իրավաբանական անձի պետական գրանցման խնդրանքով գործակալություն դիմել լիազորված անձը:	Եթե պետական հաշվառում կամ պետական գրանցում կատարելու համար գործակալություն է դիմում լիազորված անձ, ապա օրենքով նախատեսված փաստաթղթերին կից ներկայացվում են նաև համապատասխան լիազորագիր և անձը հաստատող փաստաթուղթ: Լիազորագրի նոտարական վավերացում չի պահանջվում: Վերալիազորման կարգով տրված լիազորագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով:
Քանի՞ հիմնադիր պետք է ունենա կրոնական կազմակերպությունը:	Քաղաքացիների խումբը ճանաչվում է որպես կրոնական կազմակերպություն, եթե այն ընդգրկում է առնվազն 200 հավատացյալ անդամ: Մինչև 18 տարեկան երեխաները չեն կարող անդամագրվել կրոնական կազմակերպությանը՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից և այլ հանգամանքներից: Սույն պայմանը պարտադիր չէ միայն ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպությունների համար՝ իրենց ազգային դավանանքով:
Ե՞րբ է պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ ներկայացնելու պարտականությունը համարվում է պատշաճ կատարվա	Պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ ներկայացնելու պարտականությունը համարվում է պատշաճ կատարված, երբ երբ դիմողը ներկայացնում է բանկի կամ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող այլ կազմակերպության տված անդորրագրի պատճենը կամ հաստատված վճարման հանձնարարականը, ներկայացնում է համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան կոդը՝ տրամադրված վճարահաշվարկային ծառայություններ իրականացնող կազմակերպության կողմից կամ կատարում է վճարում պլաստիկ քարտի կամ վիրտուալ պլաստիկ քարտի տվյալները տեղեկատվական համակարգ մուտքագրելու միջոցով:
Ինչպիսի՞ տեղեկություններ պետք է բովանդակի արձանագրությունը:	Արձանագրությունը պետք է բովանդակի տեղեկություններ՝ նիստի գումարման օրվա և վայրի մասին, արձանագրության կազմման օրվա մասին, նիստի աշխատանքներին մասնակցելու իրավունք ունեցող անձանց (այդ թվում՝ ձայնի իրավունք ունեցողների)

	մասին (եթե առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով այլ բան նախատեսված չէ), նիստի աշխատանքներին մասնակցած անձանց մասին (եթե առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով այլ բան նախատեսված չէ), նիստի օրակարգը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները, այլ տեղեկություններ, եթե այդպիսի պահանջ սահմանված է առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով, այլ օրենքներով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ:
Ի՞նչ է գործակալություն ներկայացվող տեղեկատվության արժանահավատության կանխավարկածը:	Պետական գրանցման կամ պետական հաշվառման համար դիմած անձի կողմից ներկայացված տեղեկատվությունը գործակալությունը համարում է արժանահավատ: Անձանց կողմից գործակալություն ներկայացված տեղեկատվությունը կարող է համարվել անարժանահավատ, եթե կա դա փաստող կամ այլ անձանց ներկայացրած տեղեկատվություն: Գործակալությունը գործակալություն ներկայացվող տեղեկությունների ճշտության ստուգում չի իրականացնում և պատասխանատվություն չի կրում դրա հետևանքով առաջացած հնարավոր որևէ վնասի համար: Նշված պատասխանատվության սահմանափակումը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ գործակալության աշխատակիցը գիտեր կամ ակնհայտորեն պարտավոր էր իմանալ փաստաթղթերի կեղծ լինելու մասին: Դիմող անձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում սխալ տեղեկատվություն տրամադրելու, ինչպես նաև իր տրամադրած սխալ տեղեկատվության հետևանքով առաջացած վնասի համար:
Ո՞ր կազմակերպությունների մասնակիցների վերաբերյալ տեղեկություններն է գրառում գործակալությունը միասնական պետական գրանցամատյանում:	Գործակալությունը միասնական պետական գրանցամատյանում գրառում է միայն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ: Բաժնետիրական ընկերությունների ռեեստր գործակալությունը չի վարում: Առևտրային կոոպերատիվների մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ միասնական պետական գրանցամատյանում չեն գրառվում: